

*Hentchak :*Organe Central  
DU PARTI

S. D. HENTCHAKIAN

Téléphone 814-18

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ Ս. Դ. ՀԵՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

## ՊԱՏԵՍԻՄՆԱՏՈՒԵԲԸ

Երեք հարիւր տարի է, մօս, որ լնդհանուր քաղաքական հողիսոնի վրայ բևեռուած՝ կեցած է Արևելեան Խնդիրը։ Նա տակաւին չլուծուած խընդիրների շարքումն է և շարունակում է մտցերը զբաղեցնել։

Արևելեան Խնդիրը Թիւրքիայի, որպէս պետութեան, գոյութեան և ոչ—գոյութեան խնդիրն է իր էութեան և ամբողջութեան մէջ։

Դարեր այդ խնդիրը ձեռք են առել, և սակայն նա դեռ յաճառ կերպով շարունակում է մնալ հերթական խնդիրների կարգումը։

— Թիւրքիան, որպէս պետութիւն, ո՛չ մի պայմանի տակ չի կարող գոյութիւն ունենալ, նա որպէս օրգանիզմ, անդառնալի կերպով փուել է, նրա հիւանդութիւնը այլևս անբուժելի է ինչ տեսակի բժիշկներ և դեղեր էլ գործածուելու լինին, — այս է եղած անդրդուելի կարծիքը շատ քաղաքագէտների և «Հարևան» պետութիւնների զեկավարիչ անձնաւորութիւնների, որոնք աչք են դրել յարմար բույեին սպասել և անդամահատութիւնը սկսել։ Սրանք անվերածելի են եղած իրենց համոզումների և դիտումների մէջ և ո՛չ մի անգամ չեն դադարած այդ ուղղութեամբ գործելուց։ Նրանց համար, իրաւաբանօրէն, Թիւրքիա գոյութիւն չունի և չի էլ կարող ունենալ, ուստի միշտ մի անշեղ ուղեղիծ, մի անընկրկելի մտածունք են ունեցել, թէ ո՞վ պիտի լինի նրան փոխարինողը, մ՞վ կամ ովքե՞ր նրա բաց թողած տեղը բռնողները։ Սրանց համար Թիւրքիոց վերածութիւն, բարեկարգութիւն, եւրոպականացում՝ անկարելի է նկատուած յախտենականապէս ու բացարձակապէս։ Դիւանագէտների այս կոճղին պատկանողները այդ կարծիքը ընդունել են որպէս ճշմարտութիւն և ըստ այնմ էլ վարուել։ Այդպէս են եղել նրանք անցեալի մէջ։ Այդպէս են նրանք անցեալի մէջ։ Այդպէս են նրանք և այժմ, մեր օրերում։ Թիւրքական «Սահմանադրութեան» վերհռչակումը նրանց մէջ միայն մայիս մայիս և ճիծալ յառաջացրեց, և այս պէս համոզուած լինելով որ երկրորդ փորձն

Journal Arménien

mensuel

XXIV Année

Adresse Télégraphique :

Հեռագրի հասցե բալու

Երևանի համար

“HENTCHAK” Paris

Էլ առաջինի բախտին կարժանանայ, որովհետև «Հիւանդ մարդուն» դարձանելու մէջ անկարելիութիւն կայ, — ժամանակը անցել է, պատմութիւնը իր վերջնական խօսքը ասել, ուստի որ և է փորձ, ճար, օգուտ չի կարող անել։ Ու նրանք իրենց յախտենական ընթացքի մէջ մնալով շարունակեցին այսօրուայ «սահմանադրական» Թիւրքիայի հանդէպ ի՛սկ քրքիջներ արձակել և իրենց քանդողի դերի մէջ մնալ, պատրաստ գոնուելով հարուոծը արձակելու ամէն անգամ երբ բույեն յարմար էր գալիս։

— Ո՛չ, Թիւրքիան հիւանդ չէ, հիւանդ է միւան նրա պետական կազմը, կառավարական եղանակը, փախի՛ր, տապալիր այդ և կտեսնես որ նա առողջ է, կենսականութիւնն ունի, կարող է իր օրգանական գոյութիւնը շարունակել, ապրել, զարգանալ, վերանորոգուել և լնդհանուր մարդկութեան մէջ իրեն վերապահուած քաղաքակրթական բաժինն ու գերը կատարել։ Սրանք, այսպէս մտածողները, ո՛չ միայն նրա «հիւանդութեան» առաջ չեն լրուել, յուսահատի միշեր չեն արձակել, այլ ընդհակառակը, հաւատալով նրա ներքին առողջութեանը իրենց զործունետութիւնը կրկնապատկել են և աշխատել պատմութեանը տալ այն՝ ինչ որ իրենն է, այսինքն զարգացման պրօցեսի մէջ աւելորդ եղած ուռեցցները և արգելքները վերացնել, որպէսզի աճման օրէնքը իր գործը յառաջ տանի։ Այդպիսի հիւանդութիւն, սրանք պընդելի են, պատմութեան ընթացքում գրեթէ բոլոր պետութիւնները ունեցել են, դա անխուսափելի է, բայց և անցողական։ Ուրեմն՝ Թիւրքիայի ապագայի մասին՝ ո՛չ միայն այդպիսիները յուսահատ չեն եղել, այլ կանխաւ համոզում են ունեցել նրան աւելի պայծառ, աւելի երջանիկ, աւելի լայն ու բախտաւոր օրերի մէջ տեսնելու։ — Ամէն աղգ, ամէն պետութիւն իր միջին դարն է ունեցել։ Թիւրքիան իր զարգացման մէջ յապաղել է, իսկ յապաղում, յամենալ՝ մածուցուիլ, կոնգ առնել ասել չէ։ Եթէ Թիւրքիան դեռ իր միջին դարու մէջն է, ոչ ոք չի կարող ասել թէ փաղն էլ չի ունենալ նա իր նորագոյնը և ժամանակիցը։

— Մի նոր փորձ էլ, և վէճը ինքնին աւարտ կգտնի, պատմութեան օրէնքներն էլ աւելի որոշ, ցայտուն կերպով երևան կպան, — պնդում էլն փորձն

ձառական դպրոցին պատկանողները :

Ու շատ զարերի, երկար ժամանակների մտածունքների, կանխատեսութիւնների, հակածառութիւնների և կրքերի բորբոքումի տաքութեամ ի՞սկ բոլէին՝ "Սահմանադրութիւնը" վերայացտարարուեց :

Հրճուանքը եղաւ ընդհանուր, խանդախռութիւնը՝ սրտաբուխ :

Ամէն ոք մտաւ սպասողական զիրքի մէջ, կողք կողքի զրուած էին դարձացական և հարցական նշանները :

Հրապարակ եկաւ նացիօնալիգմը, թուրք նացիօնալիգմը :

Նա արդէն շատերից ճանչցուած էր, գեռ իր տղայ հաստիում,—շատերին էլ թէւ անծանօթ թէ իր արտաքին ամբողջ կերպարանքովը և թէ ներքին խաղացումներովը :

Տիրողի իրաւունքը ճանչցուեց, յարգուեց. նրան զործունելութեան ամէն պայմաններ արուեց : Իր երէկուայ հակառակորդներն անգամ պահ մի լրութեան իմաստութեամբ առաջնորդուելով պէտք եղած ամէն աշակցութիւն տուեցին իրեն՝ ինչ որ կարելի էր և պէտք էր այս երկիրը վերակաղմելու, նորագունացնելու :

Աւելի քան երեք տարի է, որ "Երիտասարդ Թիւրքիան" բացարձակիչս տիրապետում է : Թուրք նացիօնալիգմը իր թևերը լայն բացած սաւառնում է . նա ամէն աղատութիւն վայելում է, —ո՛չ մի արգելը իր առաջ :

Բայց ժամանակը այլեւ հասած է բացարձակ կերպով յայտարարելու, ասելու, որ այսորուաչ "Երիտասարդ Թիւրքիան", alias թուրք նացիօնալիգմը, alias "Իտտիհատը" այլեւ իր պատմական միսսիան վերջացնելու օրերի մէջն է մտել, — այսպիսով երէկուայ տրուած հարցական նշանը աւելի ու աւելի է ճշուում և որոշեալ ձև ստանում :

Ժամանակից "Երիտասարդ Թիւրքիան", այն կուսակցութիւնը, որ յոխորտում էր թէ ինքը միայն պիտի գալ Թիւրքիան երիտասարդացնելու, եւ բոլորականացնելու, նորագոյն պետութիւն գարձնելու և նրա "փառաւոր դրոշը" միշտ յաղթ ծածանեցնելու, այդ ասողը, ահա, պատմական այս օրերի մէջ, շատերի իր վրայ զրած յոյսը չարդարացրեց, նա չեղաւ այն, ինչ որ շատերը ենթադրում էին թէ պիտի լիներ, այսինքն՝ արմատապէս վերանորոգող, ստեղծող, կարգադրող, նորացնող մի ոյժ :

Հաղիւ խանձարուրի մէջ, և "Իտտիհատականութիւնը" իր դերը վերջացրեց : Այսպէս չէր կարող լինել, քանի որ իր հիմունքը, իր ոգին նացիօնալիգմը՝ նեղ, յարձակողական, քանդող, կլանող նացիօնալիգմն էր : Եթէ "Իտտիհատականութիւնը" իր ծրագրը արմատապէս չփոխի, իր զերը այլեւ վերջացած է . նա սկսում է կոճղանալ, ծածո ո իլ և ստ-

ուցյան աստիճանի վրայ կանգնել :

"Իտտիհատականութիւնը", զուցէ, կարող է դեռ երկար տարիներ իր տիրապետողի զիրքը պահէլ, ամէն ինչ իր հակակշումն ենթարկել, "Երկրի բացարձակ տէրը" հանդիսանալ, ամէն իշխանութիւններից բլիսեցնել, հաստակական-պետական ամէն արտաքայտութիւն իր չափին ու կշռին ենթարկել, այդ բոլորը կարող է մի ժամանակի համար էլ. բայց դա պատճառ, վսաս չէ հաստատուն կերպով այժմեանից ասելու, պատմական այն Ճշմարտութիւնը յայտարարելու, որ նա այլեւ իր միսսիան վերջացրել է, դրական այլեւ ոչինչ ունի անելիք : Նա արաւայն, ինչ որ կարող էր. եթէ իր ներկայ ծրագրով ապրի, պիտի անի այն, ինչ որ այս երեք տարուաց ընթացքում արաւ :

Այսօր Թիւրքական պետութիւնը կազմող ազգութիւնների մէջ անհամերաշումութիւնը, փոխադարձ կասկածը և խոր ատելութիւնը ահազին չափեր է առել : Դա մի գմբազութիւն է, բայց և միաժամանակ դասնական իրականութիւն է :

Այսօր օսմաննեան պետութիւնը ամենածանր, և հետևանքները յառաջացնող, պարտքերի տակ է խըլուել, — սարադեր, որոնք ամենալիստ կերպով պիտի ծանրանան այս երկրի գորդացման, յառաջդիմութեան և ամրապնդման վրայ :

Այսօր արտաքին միջամտութիւնը աւելի սուր հանգամանք է առել և Թիւրքիայի "ժառանգութեան" վրայ աչք ունեցող պետութիւնների շղթաների օգակները առելի են սեղմել, աւելի են պրկել՝ իրենց դարեւոր որսի պարանոցը :

Թիւրքիայի զիրքը այսօր աւելի խախտուած է, աւելի անկացուն դարձած : Եւ սակայն Փողովրդական Միահեծանութիւնը կոչուած էր բոլորպին այլ կերպ տնօրինելու խնդիրը : Բայց ինչո՞ւ այդպէս եղաւ, ինչո՞ւ համար ահազին բացասա ական արդիւնք յառաջացաւ դոցնի դրականի առաջ, — պատճառը շատ պարզ է, զրա պատասխանատուները թուրք յարձակողական նացիօնալիգմն է ընդհանրապէս, "Իտտիհատը" և նրանից բլիսող կառավարութիւնները՝ մասնաւորապէս :

Ժամանակը հասաւ այս փաստը երևան գնելու, իր խակական գոյնի մէջ :

# «ԻՍՏԻԿԱԾԻ»

“Սահմանադրութեան” ի վերջու չակրումից ի վեր՝ Օսման-  
եան Կայսրութեան մէջ բայարձակ տիրապետող կուսակցու-  
թիւնը “Միութիւն և Յառաջադիմութիւն” (“Խատիշատ վէ-  
թէրագլու” ) կուսակցութիւնն է, որ կարծ կերպով կոչում  
է “Խատիշատ”:

Ար «Խատիչաս»ը օսմանեան նորագոյն պատմութեան մէջ գերակշխու դեր է խաղացիւ—նրա կատարած ծառայութիւնները ոչ ոք կարող է ուրանալ, որբան էլ որ իր սկզբունքային հակառակորդները չգտարեին նրա թերի կողմերը մատնամիշելուց: «Խատիչաս վէ Թէրագովը»ն գործել է, գործում է. Թիւրքիացի խակալան բաստար վարողը նա է, նա այս բողէիս մէջ ամէն ինչ է այս երլիքի մէջ. նա այն տիւրապեսող ոյժն է, որ ամէն ինչ զարձենում է իր հասկացողութեան համեմատ՝ լաւ թէ վաս, յաջող թէ անյացող,—այդ չե խնդիրը, այլ այն՝ որ նա պատճական բողէի այն զօրութիւնն է, որ նորագոյն Թիւրքիացի առաջին օրերից սկսած դեկալարում է պետական ձևափոխութիւնն՝ համաձայն իր տեսութիւններին և ըմբռնութիւններին: Իրականութիւնը նրան համակերպում է կամ ոչ, այնու ամենայնիւ նա տիրապետում է, շարունակում է ուղղութիւն տալ և պետական մեքենան յառաջ վարել:

Զուգելով բացառութիւնն կազմել դեռ անյեալ տարի, այդ  
կուսակցութիւնն էլ իրեն յայտարարեց «օրինական» Հովի  
վրայ կանգնած. և որպէս այդպիսին՝ գործեց իր կուսակցա-  
կան կազմակերպչական բայրոր օրգաններովը՝ երկրի ամբողջ  
տարածութեան մէջ՝ Պարլամենտում նա ուներ իր «խորհրդ-  
պարանական կուսակցութիւնը», որ իր էութեան մէջ ո՞չ այլ  
ինչ էր, եթէ ոչ կուսակցական մի օրգան:

Այսպէս «Խոտփհատ»ը շարունակեց իր յազմական, տիրապետող ընթացքը, ինչպէս որ այդ եր իրաւունքն էր կուսակցական տեսակետով՝ տիրապետող ամէն կուսակցութիւն, իր զվարաւոր զծերի մէջ, ազատ իրաւունք ունէր վարուելու անապէս, ինչպէս որ "Թէ՛ւոառո՞ց", Է.

Որբան որ իր յառաջապացման ընթացքի մէջ այլ  
կուսակցութիւնը արտաքին և ներքին մի կարգ դժուարու-  
թիւնների հանդիպեց, այնու ամենայնիւ նա մի տեսակ ար-  
տօնեալ վիճակ ունէր՝ իր գաղափարական հակառակորդների  
մէկ ճամփ կողմից։ Անշուշտ շատ քննազառութիւններ,  
շատ խնդիրներ կային, որ պէտք էր հրապարակ բերել,  
խօսել, պայքար մղել, բայց յաճախ այդ չէր լինում և  
«Խտտիհատ»ը շարունակում էր մի տեսակ առաւելակշիռ  
իրաւունք վայելել, որովհետեւ ընդհանուր բէակցիայի երկիւ-  
ղը կար և այդ տիսուր ուրուականը անմէն ընդդիմադիրների  
վրայ հրամայական պարտականութիւն էր զնում փոքրագոյնը  
զոհել մեծագոյնին, մօտաւորը՝ հեռաւորին։ Խնդիրները յա-  
ճախ յետաձգում էին, մինչև որ ընդհանուր ստուգութիւնը  
և ապահովութիւնը տիրող հանդիսանար, գէթ ինչ որ վե-  
րաբերում էր «սահմանադրական» կարգերի հաստատութեանը  
և յարատելութեանը։

Կեանքը դորւում էր ալպիա:

Այսուղի ճենք նպատակ չունենք ո՞չ "իտոլիշատ"ի դոր-  
ծերը պատմելու, և ո՞չ էլ նրա բացասական ու դրական  
կողմերի աճը բոլորի հրեան բերելու

Այս անգամ մեր ասելիքը ուրիշ է օ

Ոչ ոքի համար այլևս գաղտնիք չէ, որ «Խտակհատը», որպէս կուսակցութիւն, որպէս մի օրգանիզմ (օրինաւածու-

թիւն) Ենթարկուել է ներքին դօրեղ ցնցումների; Ամսմբ աշխատում են ցայց տալ որ եղածը շատ չնչն բան է, —կուսակցական փոքրիկ վէճեր, որ հրապարակ են գալիս Հարցերի լուսաբանութեան տեսակիցնից և, ուրեմն, աելացնում են, ներքին Համաձայնութիւնը կատարեալ է գեթ ինչ վերաբերում է կառակցական դիեկտարիչ ոկզբունքներին: Ամսմբ աւելի քան յուեստե են իրենց յայտարարութիւններով: Բայց բեցական ճամար ուժապարում է Հաւաստիացնել թէ ամէն ինչ կա՛մ Հարթուել և կա՛մ Հարթուելու վրայ է, ուստի կանխում են Հեքնական սլաքներ արձակելու դէպի այն Հաւաստիունները, որ կուգէին “ԽտափՀաս”ին օր աւաշ ներցին ալէկրծումների ենթարկուած տեսնել, որպէսզի իրենց սիրած և ակնկալած “ըէակցիա”ի օրերը վերադառնացին և լրենք նորից Հրամայողի ու տիրապետողի զիրքի մէջ մտնէին:

Որ շատ «յետադիմականներ» կան, սրբնք կուղէին «Խոտիհատ»ին տեսնել ո՞չ միայն կուսակցական փոթորիկների ըստուած, այլ հոգով սրբով կյանիկային նրա արձատացի տապալմանը, սրպէալի իրենք կարողանային երկիրը նորից կողապետի, —առ ճատին հասկած սիստան քեզուած է:

Թողնենք "արտաքին անբարեացակած"ները, որոնց գործականութեալ ամէն տեսակի վիճակներ իրենց երեսին առած ո՛չ մի անբարոյական միջացների առաջ յետո չպատի ընկըռ-կեն պատահառումի ամէն տեսակ սերմեր ցանելու, որպէսզի «Սահմանադրութիւն»ը փանգուի, ու իրենց իրենց խաղերը կարողանան ապաս խաղալ Իրողութիւնն այն է, որ Թիւրքիայի մէջ «Հակասահմանադրական» տարրեր շա՞տ ու շա՞տ կան, ամէն մէկը, յայտնի բան է, իր շահի և ձգտութիւնների տեսակետաց: Արդ բոլոր նրանք՝ լինեն արտաքին պետութիւններ, լինեն ներքին յետագէմ ուժեր, որոնք չէին կարող ցանկանալ նորագոյն Թիւրքիա տեսնել—պահնք բոլոր սրաւագին ցանկացագոյններ են որ «Խտափհատ»ը լինինի, և այդ միայն այն տեսակետով, որ նա ձգտում է այս երկիրը ձևափոխութեան մէջ մացնել: Իշարկէ այդպիսիններին զբաղեցնողը չէ այն՝ թէ «Խտափհատ»ը բաղադրական, մասաւական, ընկերացին լայն թէ նեղ սկզբունքներով է առաջնորդում, և որ իրենք կուղեին աւելի լաւագոյնը, աւելի բարձրը յառաջ բաշէլ—ո՛չ նրանք այդքան մեծահոսի չեն, նրանք այդ կուսակցութեանը քայլացումն են ուղղում, որպէսի տառ նա մի դործօն ոյց է, որ իրենց ուտելու ախտրժակին արգելք է համովանում:

Գլուխնք, "Խտափհատ" թշնամիններ են շատերը այն պատճառով, որ նախարար դառնարու, բարձր պատօններ ձեռք բերելու մարմածից են բոլոր նրանք՝ որոնք ժողովրդական կառավարութիւն, սահմանադրութիւն ասերով հաւանում են մի կարծ և հնարաւոր միջոց, որպէսզի շուտով պաշտօնի վուլս անցնեն և միլիոններ զիզեն, թէև իրենք ամենասամբնալունակներ լինենք.— բոլոր դրանք «Խտափհատ»ի անկմանը փափագովներ են, բայց միայն այդ տեսակետով, ուրիշ ոչնչ նրանք հակառակ վիրք կունենային, եթէ իրենց ցանկութիւններին հասնել կարողանային՝ այդ կուսակցութեան միջոցով:

Յայտնի է, շատերը կան այս երկրում, որ "Խտախհատականնութիւն"ը համարում են մի ճոփ սեղան. հարկաւոր է միայն ներս մտնելու միջոցը գտնել, որպէսզի վայելումը գայ: Եղան ոմանք՝ այդ ոպիներից, որ առատութեամբ վայելեցին. բայց մի օր, երբ սեղանը փոքր եկաւ, կերակուրը՝ թիւ, ու տողները՝ շատ, այդ ժամանակ սեղանալցութիւնից զրկուող մասը իր դժոխութիւնը յայտնեց և թշնամի գարձաւ Ար այդ տեսակի հակառակորդներ շատ կան և կուգեն, որ «Խտախհատ»ը երթայ, որպէսզի իրենք նրա տեղն անցնեն, — դա անվիճելի է: Անձնականութիւնը, անհատական շահը

շատ մեծ դեր է խաղում «Հակախտակատական» բանակի մէջ:

— Դուք երէկ թունդ «իտալհայտական» էիք, վիճում  
էիք համոզուածի շեշտով, խակ այսօր հակառակորդ. ինչու  
այդ, հարյուրամ ենք մէկ խօսակցից:

— Եսատ Հասկանալի է, որովհետեւ նրանք չկարողացան  
ինձ գնահատել. ինձնից աւելի նուազ պատրաստութիւնն ու-  
նեցողները ամենաբարձր պաշտօնների հասան. իսկ ես մնա-  
ցի ինչ որ էի, թէև խոստացել էին ինձ ճիշճիւ անդամ նա-  
խարարութեան աթոռը բարձրացնել աշնեպան որ գրաւուել  
էին իմ ցոյց տուած կարսողութիւնից: Եւ հիմայ, որ հակա-  
ռակորդների կողմից թշնամութեան հանդիպեցաց, ինձ խար-  
ուած տեսայ, բնական է որ այլև իրենց հետ գործ չպիտի  
ունենամ:

Խօսակցիս նման հոգեբանութիւնն ունեցող հակառակորդների թիւը ցիս չէ:

— Զեր ծրագիրը հիմնալի է, ասում էր մի ուրիշ խօսակից, որ աճապարանօք մեղ ճօռ էր եկած, Հարկաւոր է միայն մի քանի կէտեր փոխել, այն կէտերը, որ «միւալինան» տարրին զդուար հասկանալի է, և ապա որպէս ծրագիր ներկայացնել: Վաստահ եմ որ մեր երեսփոխաններից շատերը կընդունեն ու այդպիսով մեծամասնութիւն կազմենով անմիջապէս նախարար կդաւնանիք ու գործերը մեր ձեւքը կստունենք:

— Բայց զա նսկա անկարելի է, երկրորդ, բարեկա՛մն,

—Ոչի՞նչ, ճեմանութիւն կկազմենք, օրէնք քուէար-  
կել կտանք և հարցը կվերջանայ:

Խօսակիցս մինչև վերջը համոզուած էր որ այլպիտավինքը, հակառակ իր «իտոիհատական» չուզողացներին, նաև սարսար կարող էր դաւնալ:

## Այդ տեսակ տիպեր լիքն են

— Անցեալ տարի, բարեկամս, զուք կարճիր ”Հակախտարշատական” էիք, գտնում էիք որ այդ կուսակցութիւնը աւելի քան չսպասուր, սահմանափակ էր և իր տածած նեղ ըսկըզբունքներով անկարող պիտի լինէր Թիւրքիան վերականգնել և նորագոյն պետութիւնն գարձնել, ուստի կրօնակից էիք աւելի՝ մի արձատական, դէմօկրատական կուսակցութեան առաջ գալուն. այդ ուղղութեամբ զուք բաւականին չամքեր թափեցիք, ու նոյն իսկ ուղում էիք լրագիր Հրատարակել, որի համար և մեր աջակցութիւնն էիք խնդրում, այսօր զուք թունդ «իստիհատական» էք, ինչու համար այդ փոփոխութիւնը :

— Բարեկա՞նս, սա Սրեւը է, այսուեղ ամէն ինչ ծխանքածից չի վոփուիլ. անկարելիութիւններ, զժուարութիւններ տեսայ առաջօ: Աչքի առաջ ունեցած ոյժերիցս ամէն ձեւը նի պատրուակ բանելով՝ Հեռացան: Դրանցից ունանք «Խտափհատուած»ի ձեշը ճտան: Ես մնացի մենակ: Վերջը՝ "Խտափհատուած"ը իմ տրամադրութեան տակ զրեց իր սրահները, իմ պրոպագանդան առաջ տանելու համար, և յետոյ ինձ ստիլսեցին, Հայրենիքի սիրոցն համար, այս բարձր պաշտօնն ընդունելու որի մէջ ինձ տեսնում էք այժմո, ես չկարողացայ մերժել որովհետու հակահայրենասէր կնկատուէի. և կամաց կամաց համոզում եմ, որ "Խտափհատուած"ը իմ նախկին կարծածի պէս չի եղեր:

Խոսակիցս, ամսականն երբեմն 10-15 ոսկի աշխատղային իր նոր պաշտօնից ստանում էր 100-120 ոսկի... Անցան տարիներ, և երբեմնից գաղափարականը սկսեց, որպես «հստափհատական»՝ հալածել իր նախկին գողափարականին :

Սրանք բացատրիչ օրինակներ են:

Կրկնում ենք, շատերը կան որոնք եռանդավագն կերպով կցանկանացին «Խոտիհատ»ին զժուարութիւնների մէջ տեսնել, նրա անկուրած ցանկանալ պարզապէս իրենց ներքին զժում Հաշիւների տեսակէտով:

Բայց այստեղ ի խնդիրը այլպիսիների համար չէ. զբանց  
կա՞մ ջրի վրայ լողացողներ են, կա՞մ սրբեր,—երկուսն էլ  
նշանակութիւնից դուքի:

Ներկայ եղածը, մեզ շաղրգող սլատահածը այդ անսկիցը չէ:

Այն զժուարտոթիւնները որի մէջ այժմս «Միութիւն և Յառաջադիմութիւն» կուսակցութիւնը ընկել է, — զա ունի իր հիմնական, արձաւական խոր պատճառները: Եղածը անփուստափելի էք: Այն՝ ինչ որ լինում է, անսպասնան պիտի լինէք եթէ շատ դժուարութիւններ այսօր Հարթուին էլ, վաղը նրանք նորից ճեցտեղ կգան: Կուսակցական կարգապահութիւն կած անկարգապահութիւն այդուղի դեր չի կարող խաղալ: Այն՝ ինչ որ կասարւում է այժմս "Խտափհատի" մէջ զա մի բնական երևոյթ է, հետևանք իրերի բնութեան: Եւ որպէս այզպիսին՝ այդ երևոյթը մեզ չի կարող չհետաքրքրել Մօտենանք եղելութեան:

Ցեղակիոխութիւնը յաղթանակել էր: Նա ուժով իրականացած մած մի փոփոխութիւն էր առաջ բերել՝ Թիւրքիայի իրականութեան մէջ:

Ընկերային շատ տեսակի ուժեր կային, որոնք տարբեր տեսակեաներից ճգլելով՝ հակառակորդներ, թշնամիներ էին՝ “Հին բէմիծին”։ Սա տապալուած էր և իրեն հետ տարել այն բոլորը, ինչ որ իր նեցուկն էր կաղզում։

Մինչև յաղթութիւնը ”Խոտիհատ”ի գերը աւելի մարտական, բացասական էր: Յաղթութիւնից յետոյ գալիս էր կազմակերպչականը, դրականը,—կուսակցական շինիչ, ստեղծագործող, ծնուցիչ գերը:

Բայց ո՞վ ի՞նչ էր "Խտտիշառականութիւն"ը՝ որպես կուսակցութիւն. ի՞նչ էր նրա արժէքը, սկզբունքային, գաղափարական տեսակիւթից: Նա ներկայացուցիչ էր ընկերացին ո՞ր դասի, ո՞ր դասակարգի: Ի՞նչ ընկհանուր արժէքներ էր նա բերում "Հին"ը՝ "Նոր"ով փոխանակիելու:

Այդ հարցերի պատասխանը պիտի տար կուսակցութեան ծրագիրը: Բայց "Խտուիհատ"ի ծրագրի մէջ ընդհանուր փիլիսոփայութիւն, որոշեալ սկզբունքներ, ժամանակակից հասկացողութեամք՝ ընկերույթին յայսնի դասակարգերի արտայացուութիւնը եղող կուսակցութիւններին անհրաժեշտ՝ համկայութիւններ չկային: Նա աւելի շուտ մի հաւաքածու էր որ բարենորոգչական, ըէֆօրմատորական բնաւորութիւնն և միտուններ ունեց, քան գիտական մի ծրագիր:

Այսպիսի ծրագրով, անորոշ սկզբունքներով կազմակերպուած մի կուսակցութիւն, կարո՞ղ էր արդեօք լուծել այն բոլոր խնդիրները, որոնք ամէրաժեշտորէն իր առաջը պիտի ցցուելն ժամանակի ընթացքուած։ Իր յաղթութիւնը, իր տիրապետութիւնը ի՞ր խոկ փորձաքարը պիտի գուռնար։ "Հին"ը՝ կործանելու մէջ նա կարող էր ներկայացնել միայնակ, կերպոնացած մի ոյժ, այլազան տարրերից քաղելով. այդ ուղղութեամբ և նպատակով շատ համակիրներ և անդամակիցներ կարող էր շահէել, բայց երբ հնչեց յաղթութիւնը, եկատ կազմակերպաչական գերը, օրակարգի անցաւ այն խնդիրը, թէ ի՞նչ պէտք էր պահէել, ի՞նչ ջնջել, ի՞նչ փոխել, ո՞րը ձևակերպութեան ենթարկել, ո՞րը՝ ո՞չ, ո՞րը պիտի լինէր այն նորը, որին պիտի ձգտէին և ուղին՝ որով ընթանայի՞ն, — այստեղ, ահա, գժուարթէ իր բոլոր անդամները համանման պատասխան կարողանացին տալ, որովհետև նրանց սկզբունքային մի փիլտրուած յութեան շուրջ չէին համախմբուած. ամէն մէկը տարրերի խմբերի և զատամալարի ներկայացուցիչներ էին. — ասել է թէ

կենսական շատ շահերով և ձգտութիւներով իրարու հակառակորդ ազդակներ:

Դէպքերը եկան ցոյց տալու, որ "Խոտի՛Հատ" ը ենթակայ էր ներքին Հիւանդաւթեան, որ գտուալութիւնների սաղմը ի՞ր ձարմանի, իր բազկացութեան ձէշն էր, և ցնցումը անխուսափելի:

Կուսակցական լեզուով խօսելով, իրականութիւնը եկա  
յայտաբարենու, որ "Խտտիհաս"ը կարօտ էր կուսակցական  
բիւրեղայցման, զուման: Այդ տեսակէտով, ուրեմն, կատարուածը  
ընդունելով որպէս մի բնական երևոյթ, այցանող ո՛չ ցաւերու  
ո՛չ ուրախանալու, ո՛չ էլ տրամելու պատճառ կաց, արդէն  
պիտի լինէր այն, ինչ որ լինում է: Ներէ ամէն ինչ հսում  
է, եթէ ամէն բան լինելու (devenir) վրձակի մէջ է գտնուում,  
"Խտտիհաս"ը յաւիտենական բացառութիւն չէր կտրող կազ-  
մեր: Նա էլ պիտի ենթարկուէր լնկերացին խճքերի և դա-  
սակարգերի զարդացման օրէնքներին: Եր բարդացութիւնը  
չէր թոյլ տալ մշտական անշարժութեան մէջ մնալու. ներբէն  
պայմիւնը կետուի բնական պահանջն էր:

Բայց ինչից այդ յառաջ եկաւ :

Համոզուած ենք որ "Խառնչատ"ը այսօրուայ ներքին ցըն-  
ցումներից ազատ կլնէր, եթէ նա սկզբից ի վեր մի բնուե-  
ղացած կուսակցութիւն լինէր, — այսինքն մի կուսակցութիւն  
որ իր սրոշ գաղափարաբանութիւնը ունենար, բղխող այն  
գասակարգերի և խճերի շահերից, որոնց անունով որ ինքը  
գալիս էր կուսելու, յաղթելու և ձեւափոխութեանը նախագո-  
հկու:

Եթէ այդպիսի մի կուսակցութիւնն եղած լինէր, նա կարսող էր ուրիշ կուսակցութիւններից յաղթուել, ուրիշի հարւածների տակ իր գլուքը կորցնել, այդ չէ խնդիրը, բայց նա իր մէջ ներքին պայքարը չէր ունենալ, նո զերծ կլինէր այն ներքին գալարութեներից, որին խնդր ենթարկուել է իր տիրապետելու օրից ոկտած: Եթէ այդ պայքարը, ներքին գաման այդ պրօցեսը, այսօր զօրեալ կերպով երևան եկած չլինէր, նա կարտայցառուէր վաղը՝ Քանի որ կագծակերպութեան բաղկացութեան տեսակէտով ինչական և գաղափարի, ոկզբանեքների, նա մի հաւաքածու, ապօնօմէրատ մի օրդանիլոց է, նուա միջին ներքին ցնցումներ անհպակաս կլինեն:

Պարզենք թէ ինչո՞ւ այդ այդպէս է:

”Մարզը կայսրութիւն չէ՝ մի ուրիշ կայսրութեան մէջ”,  
—Ճիշտ է Սպինօզայի ասածը: Բայց կուսակցութիւնահա-  
հատը ուրիշի կայսրութեան մէջ կայսրութիւն է, եթէ նա  
որոշեալ դասակարգելի պահանջներից, կարիքներից առաջ  
եկած մի արտադրութիւն է: Այսպիսի մի կուսակցութիւն  
կայսրութիւն է թէ՛ իր զօրաւոր և թէ՛ իր թոյլ օրերի մէջ,  
—նա գերծ կլինի ներքին փառախոյց, որովհետեւ ինքն իր  
միջնորդ և վախճանն է:

—Թիւրբխայլ ընդպարձակութեան մէջ ֆէօպալական տարբեր կան, ոչ անգումնելի քանակով և որակուի: Մրանք երէկշւայ կեանքի, «Հնի» մէջ, առաջնակարգ, տիրապետող գիր ունեցողներ էին Ազգ դասը, կարող ենք ասել նոյն խոլ դասակարգը, ունի իր բազմածիւղ տարածականութիւնը: Պետական բարբար աստիճանների մէջ նա բարձր պաշտօնների զբուխ է կանգնած, ունի զօրել ընկերացին զիրք, անտեսական տիրապետող ոյժ, ժողովրդացին ապեցութիւն: Նա «Հնի» պաշտանն էր: Յապթութիւնից յետոյ՝ նա եկաւ «Նորի» մէջ և անդամակցեց «Խտախհատ»ին՝ որպէս քաղաքական կուսակցութեան: Այդ ապրը «Խտախհատ»ի մէջ ահապին թիւ է ներկայացնում, շատ տեղ իր կազմակերպութիւնները նըրանց ձեռքին են: Արդ, կուսակցութիւնը ի՞նչ ունէր նրանց մասին իր ծրագրի մէջ: «Խտախհատ»ը պիտի արտայացաէր նրանց կարիքները, նրանց քաղաքական արտայացչւէր,

թարգմանը պիտի լինէր. չէ՞ որ հէնց այդ նպատակով եփն  
եկած ֆէօդալները իր մէջ, որպէսզի իրենց շահերը պաշտ-  
պաներու միջոց ունենան:

Թիւրքիայի մեծ քաղաքների մէջ կեղրուայած, զօրեղ բուրժուազիա չկայ, — մի բուրժուազիա, որ յաղթական կը ու ուցի, Փէսպատականութեան առավարումից դուրս եկած վնէր Թրանսիայի 1789-ը այս երկրի 1908-ը չէր: Բայց եթէ որպէս զատակարգ, պետութեան ղեկը իր ձեռքին առնող, ամէն ինչ իր շահին ենթարկող մի բուրժուազիա չկար, — անուրանալի է, որ նա կայ, և բաւականին ծաւալուն հանգանակ բավ: Նրա սրակը և քանիակը չէր կարելի աչքի առաջ չառնել: Ունե՞՞ր “Խտափհատ” ը այդ զատակարգերի շահերին համապատասխանող բիւրեղացած գաղաքարիներ . — ո՞չ կարդ՞ղ էր ինքն իրեն բուրժուազիան մի կուսակցութիւն համարել այս բառի գիտական առումով: — զարձեալ ոչ բայց “Խտափհատ” ը իր շարքերի մէջ սատար թուով բուրժուանելունէր, որնց շահերը տրամադօրէն հակառակ էին ֆէօդական մնացորդների շահերին: Կարո՞ղ էր մի կուսակցութիւն, առանց ներքին ցնցուամերի, պետական ձեռքին, պետական ձեռքի այսպիսի հակածարու տարրերով:

«Խտափիհաս»ը ի՞նչչպէս էր հասկանում պետական ձևեալ կերպութիւնը: Կողմնակի՞ց էր նա պետական մի այնպիսի նորագոյն կազմի, ուր պետական օրդինարիմբ, իր ամբողջութեանը և աստիճանաւորումի մէջ, աշապէս առած, չէկու հովի վրայ զրուած լինէր, որ ներկայացնէր Թիւրքիայի բոլոր բազկացուցիչ ազգութիւններ՝ անխարիք: — Որբան որ այդ մասին զրական ոչինչ չկայր, սակայն բացայստ է ծրագիրը և կուսակցական գործունէութիւնը դրան ապացոյց: — «Ի՞ սութիւն մէջ մի ազգայնական կուսակցութիւն է, պաշտպանող՝ “տիրող ազգութեան” սկզբունքներ: Բայց ”տիրող ազգութեան” սկզբունքի պաշտպանութիւնը միշտ վասնողի է ենթարկում բազկացուցիչ ազգութիւնների պատճառ: Անհատական գոյութիւնը՝ իրենց զարգացման պրօցեսի մէջ: Լինել մի կողմից թուրք ազգայնական կուսակցութիւն, միւս կողմից՝ իր մէջ առնել, աշագին թուով, Ալբանացիներ, Արաբներ, Յոյներ, Հայեր, ևայլն, որոնք իրենց ծնունդ տուող ազգութեան գաղափարը թողնուզներ չեն: — Իիթերի այդ հանգամանքը ներքին հակամարտութիւնը անխուսափելու չէ:

Տիրող կուսակցութիւնը իր շարքերի մէջ ունէր աղմբ-  
ւականներ, կալուածատէրեր, մանր բուրժուաններ, գիւղացի-  
ներ, բնուրոկրատներ,—միթէ սրանք բոլորը միշտ կարող են  
միասին երթալ՝ ձևափոխութեան խնդիրների մէջ. ընկերացին  
այդ բոլոր զատակարգերը, իրենց ստորագատութիւններով  
միանման թէ տարբեր շահեր են ներկայացնում: Կարեկի էր  
այդպիսի հակառակ ազգակիներով կուսակցական անբոլղակա-  
նութիւն պահպանել՝ քաղաքական, տնտեսական, ընկերացին  
բոլոր խնդիրների մէջ, ուր նրանք պիտի գային իրենց խօսքն  
տակու, հաճածայն այն շահին, որ իրենց զատակարգինն եր-

կրօնի գաղափար պաշտպանել, նրա ներկայացուցիչներին կաղճակերպութեան մէջ՝ ահապին տեղ տալ, և ապա, չէղոք հոգի վրայ, պետական ձևափոխութիւն յառաջ բերել: Այդ խնդրի մէջ համերաշխութիւն կարո՞ւ է լինել:

Ձևափոխութեան խնդրի մէջ ծինչեւ ո՞ւր կարող է երթալ զինուորական դասակարգը: Կարո՞ղ էր նա լինի իր գասակարգային շահերին հափառակ քուէ տալ: "Աւստրիան իմ բանհակիս մէջն է", ասաց մի ժամանակ Ռաֆելին: Նոյնը կարող է այսօր առել և Շէվելիթ փաշան,—այն՝ որ "Սահ-

մանագրութիւնը իր բանակի մէջն է: Բայց դա մինչև ո՞ւր, մինչև ե՞րբ: Պետական ներկայ ձևափոխութիւնների մէջ զինուորականութիւնը կարո՞ղ է այն գերակշիռ գերը խաղալ, ամէն ժամանակ և ամէն խնդիրների մէջ, ինչ որ ընկերային գարգարման օրէնքի անհրաժեշտութիւնը պահպանջուռ է: "Խոտիհաս"ը իր մէջ ունի զինուորական տիրապետող ոյժ: Սրա շահը, ամէն տեսակէտով՝ համապատասխան է այն միւս դասակարգերի շահերին, որոնք աշխատ ստուար թուով ներկայացած էին "Խոտիհաս"ի շարքերի մէջ: Սատրդ մէկի գէալջը կղզացած նշանակութիւն չի կարող ունենալ: Նա արտայայտութիւն, ընդհանրացումն է մի աճբողջ դասակարգի:

Կուսակցական կարգավայրութիւնը որքան էլ խիստ հիմունքների վրայ զրուած լինի, նա անկարող է, կինսական բոյր խնդիրների մէջ, միասին քայլեցնել՝ փաշաններին, բէկերին, առանիներին, բուրժուաններին, գիւղացիներին, գործաւորներին, ևայն, ևայն Կարգավայրութիւնն պահպանութիւնը չէ, որ "Խոտիհասեան" վերջին ցնցումների պատճառն է ենել, ընդհանրաւակն, նա աւելի արդինք է:

Կելլոնացումն. սրանով պիտի պայմանաւորուելը Թիւրբիայի միութիւնը—համակարծիք: Բայց զրա հետ միասին հարկաւոր էր թոյց տալ որ ստեղծուի տեղական կեանք, այս էր պահպանջուռ Ալբանիան, Մակեդոնիան, Արաբիան... Եթէ այդ հրամայական պահանջը ուշադրութեան չէր տանում, արդեօք այդուն թուրք ցեղի շահը թագուած չկա՞ր:—Եթէ այդպէս, աղա մի՞թէ այլ հանգամանցն ինքնին չպիտի գար "Խոտիհաս"ի շարքերի մէջ լարտումներ յառաջ բերելու: Կարո՞ղ են Թիւրբիայի մէջ ապարու ոչ-թուրք ժողովուրդները ինքնապահնութիւն գործել Արք, երբ "Խոտիհաս"ի գործունեութեան մէջ քրիստոնէութեան բայցուիկ շահի կարմիր գիծն է տեսնում, մի՞թէ միւս ազգութիւններին պատկանոյ իր անդամները չպէտք է վրդովուէին:

Ուրեմն, երբ մի կուսակցութիւն աշխատ խայտարդէտ տարրեր ունէր իր մէջ, զուրկ մի ընդհանուր փիլիսոփայութիւնից, նա չէր կարող անվրդով կեանք ունենար:

Որովհեաւ, ուր ընդհանրաւան միանման շահ չկայ, ամէն տեսակէտով, այնուեղ ո՞չ նպատակի միութիւն կարող է լինել և ո՞չ էլ յարաւու գործունէութիւն: Ժամանակաւոր յարմարումներով միշտ չի կարելի առաջար:

Որովհեաւ, անհատի ընկերային զրութիւնն է որ որոշում, ուղարկութիւն է տալիս նրան այս կամ այն կողմը թերուելու—ներբին՝ ցնցում, որովհեաւ ընկերային տարրեր զրութիւններ էին ներկայացուած միատեղ:

Որովհեաւ շահագործող և շահազործուող զասակարգերը միշտ միաբար ուղարկութիւն չեն կարող ունենալ և ոչ էլ միանման նպատակ—Երբ անդամների մէկ մասը հարկերի ծանրութիւնը իր վրան է առնում, իսկ միւս մասը միայն վայելում, նրանց միութիւնը, համաձայնութիւնը աւելի քան փարուն հող է ներկայացնում:

Երբ ուրեմն, մի կուսակցութեան մէջ բարձատեսակ շահեր կան, իրարու հակածարտ ներկայացուցիչներով, այնուեղ ընականաբար, ընդհանումն անխուսափելի է, վաղ կամ ուշ խիստ կամ թոյց:

Անձնաւորութիւնները այդուել դեր չեն կարող խաղալ: Հիմքի փաշային կարող է փոխարինել հաղող փաշան, սրան՝ որիշը, բայց զրունով իննիկիները չեն վերջանալ, քանի որ նրանք արտայայտիչն են: "Խոտիհաս"ի:

Այսպէս, հաղի ստեղծագրծող շըջանի մէջ մտած՝ երբ ձևակերպութեան բովեններն էին ծուեցած, "Խոտիհասական"ի մէկ մասը զժողուած է իր կուսակցութիւնը շատ չափաւորական համարելով, միւսը հեռանում է չափազանց ծայ-

րայեղ նկատելով: Այս վերջիններիս մէջ դուրս եկան օսմանեան Bonald-ներ, de Maistre-ներ, մի տեսակ «օրինական»ներ (légitimiste), որոնք խօսում էին պատմական իրաւունքների, ազգային աւանդութիւնների տեսակէտով և իրենց համարում պատմական դպրոցի պատկանողների:

Խոդին այն չէ՝ թէ ո՞ր կողմն է արդար, որը՝ անարդար: Իրողութիւնն է որ կողմերից իւրաքանչիւրը կարծում էր, որ "Խոտիհասականութիւն"ը իր գաղափարաբանութեանը, պիտի գար հաստատելու իր ասած-խօսաձները: Կուսակցութեան սկզբունքային տարտամութիւնը աչքի առաջ ունենալով ամէն մէկը իրաւունքն իրեն էր տալիս, գոյցէ և ո՞չ մէկը սիսալում իր տեսակէտով:

Ներքին պայքարը եղաւ, որովհեաւ չէր կարող ընկել: Այդպէս եղած է ամէն անդ և ամէն ժամանակ:

Ցաղթող կուսակցութիւնը ինչպէս ոլէտք է գործածէ իր ուժը: Պատմութիւնը ցոյց է տալիս որ նա ձկուում է ընկերութիւնը ձևափոխութիւնի լիր ոկզունքների, իր ոկզունքների, իր գաղափարապետութեան մէջ, այնուեղ մինչև վերջ մէջ այդպէս կամ համարականութիւնը չամացածաւ, ուրիշ խօսուով այն գասակարգի շահերի համաձայն որի ներկայացուցիչն էր ինքը: Բայց երբ անդամների մէջ ընդհանուր շահ չկայ, ամէն տեսակէտով: Երբ մի քանի գասակարգեր հակամարտ ձգտութեանը միահանդեպ մինչեւ մինչեւ վերջ մի կազմակերպութեան մէջ, այնուեղ մինչև վերջ համերաշխութիւն, կուսակցականութիւնը չի կարող լինել:

Կուսակցական բիւրեղացումը, ուրեմն, առաջին և վըճռական պայմանն է՝ յաղթող կուսակցութեան յարատեան համեմատական շահամարդութեան մէջ այդպէս կուսակցական յարատեան համար:

Կրկնում ենք. երբ յեղափոխութիւնը յաղթութիւն է տանում ու հասարակական իշխանութիւնները այլուս չեն գտնուում հակառակորդների ձեռքը. Երբ ո՞չ թէ անձի, այլ կառավարական սիսուէմի մէջ է փոփոխութիւն տեղի ունեցել. Երբ հին գասակարգերը տիրապետութիւնից ընկել, նորերն են յառաջ անցել, այն ժամանակ յաղբուզը աշխատում է իր շահերը, իր գաղափարները արժէբաւոր գարձնելու՝ ի՞ր կազմակերպութեան միջայցով: Աշահ չէլ կուսակցական զտումը ասունուել է անդամական կազմակերպութեան միջայցով: Աշահ այսուղի էլ կուսակցական զտումը անդամական կազմակերպութեան միջայցով: Երբ խնդիրը գալիս է նորը մէջանեղ բերելու, ձևակերպութեան և այբուղ կայ, վարիչների մէջ, մըտքի այլատարութիւնը, հակամարտ հասկացողութիւնը, բնական է որ ամէն մէկը իր յառակ միտունները յառաջ բշելով ներքին զդրումների պատճառ տայ: Այսպիսի ժամանակներուն ծայրը է առնում ապահովութիւնը կազմակերպութեան մայութիւն մէջ անձանել բարձրաւոր գարձնելու՝ ի՞ր կազմակերպութեան միջայցով: Երբ յեղափոխութիւնը արժէբաւոր գարձնելու՝ ի՞ր կազմակերպութեան միջայցով: Աշահ այսուղի էլ կուսակցական զտումը անդամական կազմակերպութեան միջայցով: Աշահ այսուղի էլ կուսակցական զտումը անդամական կազմակերպութեան միջայցով:

Ընդհանուրից բացառութիւնը չէր կարող կազմել "Խոտիհաս"ը: Նրա հերձուածուների հոգեբանութիւնը տարբեր չէր կարող լինել և ո՞չ էլ տարբեր հեռանունքներ յառաջացներ:

Միթէ այդպէս չէ եղած ապահովութեան դասական երկրում՝ ֆրանսիայում: Ֆրանսիական յեղափոխութիւնը 1848-ին յաղթուց: Բայց յաղթուները շուտով պարտուեցին, որովհեաւ իրենց բանակի մէջ շահերի կուսակցական միատարրութիւն չկար: Երբ եկաւ յաղթութիւնից օգտուելը իրենց շահերին համապատասխան են գտնում, հրճուանքի՝ խլըռումնի մէջ մանում և յաջուրութեան բուլէների սպասում: Ընդհանուրից բացառութիւնը բայց կազմակցութեան այդ զրութիւնից օգտուելը իրենց շահերին համապատասխան են գտնում, հրճուանքի՝ խլըռումնի մէջ մանում և յաջուրութեան բուլէների սպասում:

պատճառ դարձաւ նախօլէօն Գ.Հի պետական հարուածի Ճամփապարհի հարթուելուն:

Նոյն այդ երևոյթը տեղի ունեցաւ Խոալխայում, Գեղանանիայում և Աւարիայում՝ միւնչոյն թուականին. Յաջող ապստածքութիւնից յետոյ՝ յեղափոխական ընդդիմադիր ճանապարհութեան մասնակիութեան ուժում էր գործութեան մասնակիութեան ուժում, կորով և ընդունակութիւնն էր ցոյց տուել, իրեն աննշաբարող զգաց կազմակերպելու, նորը ձեռակերպելու մէջ, որովհետեւ երէկուայ միացածների մէջ՝ յալթութիւնից յետոյ՝ հակամարտութիւն էր երեկոցած, — արդիւնք գասակարգային շահերի:

“ Աստվիշատ ” ն էլ այսօր միւնոյն պրօյէսի մէջն է, յեղափոխական, ընկերային, պատմական օրէնքներից նա բացառութիւն չէր կարող կազմել:

Կուսակցական բխրեղացումն, — աշտ իր փրկութեան  
միակ միջոցը:

Եւ բիւրեղացամն ասելով ձենք ճիշյն կադմակերպչականը՝ չենք հասկանում, այլ և՛ սկզբունքայնը, և՛ գաղափարականը:

Յեղափոխաւթիւնից յեսայ հաստատուած իրերի դրութիւնը բարուսին կայտն չէ. կայ ճի շարժուն հող, որ գերկար ժամանակ ապահով չի կարող նկատուիլ: Ժամանակ պիտօք է, որպէսզի սահմանադրական կարգ ու կանոնը կեանքի անհրաժեշտութիւն գառնայ: Եւ որպէսզի այդ գայ, պէտք է ով խրաբանջիւր դասակարգ իր սեպհական, դասակարգային կրուսակցութիւնն ունենայ:

Միջնադասակարգային, մի քանի դասակարգեր իր ճեղքովանդակող քաղաքական կուսակցութիւնն չի կարող լինել եթէ պատճական բերձունքով էլ լինի, նա յարատեն, արդիւնաւէտ գործունչութիւնն չի կարող ցոյց տալ՝ վաղ, ուշ կենաւարիւթ կազմականան:

พิชัยรุ

Որպէշետև յեղափոխութիւնը մի պլրօցէս է, որ ենթարկում է պատմական, ընկերային օրէնքներին. իսկ այդ օրէնքները՝ դասակարգելի գոյութիւնը, դասակարգային կուրհները, ուրեմն եւ դասակարգային հիմունքները՝ կուտած կազմական կուտակցութիւնները, պատճութեան անհրաժշտութեան և միանգամայն բովանդակութիւններն են հանունք.

Նորագոյն կեանցի մէջ ծանող Թիւրքիան ընկերացին առասանձնան ապահ մնմար էի կասա ունի.....

"Խոտիհասությունը" ը ո՞չ թէ արգելվ, այլ ինքը պիտի զիւրաց-էք, որպէսզի այս երկրի մէջ էլ պահպանողականութիւնը Conservatism), Ազատականութիւնը (Libéralisme), Էրևանականութիւնը (Radicalisme) և Սօցիալ-Դէմոկրատականութիւնը (Social-Démocratie), իրենց սեղման կազմակերպութիւններով, դործոն դիրքի մէջ մտնելն: «Նոր բեմիմ» ի կենականութիւնը նենց դրանով պիտի զայտնաւորուեք: Այս երկիրը, իր զարգացման ներկայ որդանի մէջ, Պահպանողական, Ազատական, Արմատական Սօցիալ-Դէմոկրատական շրու զիւռաւոր կուսակցութիւնների - իրենց երանգաւորումներով և ստորաբաժանումներով խասին - համար պատրաստի և բեղմնաւոս Հռու անի:

Թաղաքական մի կուսակցութիւն տարտած գաղափար-  
երի, անորոշ սկզբունքների, տարասեռ շահեր ներկայաց-  
ող ընկերացին հաճախ ճբումների և դասակարգերի շտեմա-  
նի կարող լինել՝ չշտական տիրապետութեան մենալու-  
առութիւնը ունենալու նպատակով:

Իրերի բնութիւնն է որ ուղղութիւնն է տալիս անհատ-  
երին ու հաւաքական կազմակերպութիւններին և ոչ թէ  
երցիններս առաջինին։ Անասուս որ այս պատճես է — “իտ-

տիկասո՞ւի մէջ ծագած դժուարութինները զրան կենդանի վկայ :

Միութիւն, Յառաջադրմառմառթիւն,—ըլրանք անստոյգ եղբեր առածգական հասկացողութիւններ են: Նախ՝ ամէն դար և ընկերութիւն արքեր կերպով է ըմբռնել ու կիրարկել այդ գաղափարները: Երկրորդ՝ ա՛յլ է Միութիւնը, Յառաջադրմառթիւնը մի պահանողական, ազգայնական կուսակցութեան համար, ա՛յլ՝ պատասական, արմատական, սոցիալ-դէմօկրատական կուսակցութիւնների համար: Մէկի հասկացած յառաջադրմառթիւնը միւսի համար յետաղիմութիւն կարող է լինել: Մէկի ըմբռնած միութիւնը՝ երկրորդի, երրորդի համար անմիութիւն, լուծում, քայլայում, ջնջում կարող է նկատուիլ և՝ ընդհակառակը: Երկար բացարուելու կարիք չկայ: Երկրի, ընդհանուրի շահ, միութիւն, սահմանադրութիւն, պատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն, արդարութիւն... քաղաքագիտական բառզրկի բոլոր բառերը... իւրաքանչյուր կուսակցութեան համար զատ չափանիշեր ունին եւ հենց զրա համար էլ ընկերութեան ծոյի մէջ ապլու բոլոր գառականութեան պահանջանակ կազմակերպութիւններով երեսն պիտի գան՝ իրենց խօսքն ասելու:

"Խտտիհատ" ը յաղթեց, տիրեց. եկել է կազմակերպելու րոպէն, — անխուսափելի է, նա պիտի բիւրեղանայ, մի որոշ դաստիարգի քաղաքական արուայասութիւնը պիտի լինի՝ "Հաւելի հէնց զրա համար է որ իր կուսակցական բնաշը-ջումը մեղ առանձնահայես շահագրգում է:

"Մերունի Թուղթեր"ի կազմակերպչական, քաղաքակրթական յատկութիւնների Հետ ծանօթ ենք: "Երիտասարդ"ների տաղանդը գեռ շարունակում է հարցական մնալ—և այս երեք տափի Է:

Թիւրքիայի ներգին լսաղաղեցմանը և աստիճանական գարգացմանը մենք մեզ կողմնակից ենք յայտարարել սկզբից ի վեր, այս երկիրը ուսո՞ կոխելու օրից:

Մենք և մեզ նման շատերը, մինչև ցարդ ամենայն համբերատարութեամբ սպասեցինք, և զեռ սպասելու տրամադրութիւն էլ ունենք. բայց այդ համբերութիւնը, որքան որ իր կանխորու սահմանը, պատճառաբանութիւնը եւ թիւնութեն ունենայ, նա յափենական լինել չի կարող հնչութես որ յափենական, տարապայման արտօնութիւն չեն. լորող վայելել ապացուցուած և այլևս պատճական դարձած մերդունակութիւնն ու կառաջացած թիւնն.

Կուսակցական խիստ, սուր պայքարը, ընդհարումները  
արթապատեհչ չեն կարող լինել ներկայ, պատճական այս օրեւ-  
փ մէջ.—դա բոլորովին ա՛յլ հետևանքներ կյառաջացներ.  
այս եթէ կուսակցական անխնայ կուների աշխանով հնչի  
անխուսափելի դասնայ,—դա աճբողջապէս կծանրանայ  
ացիօնայիզմի և մասնաւորապէս բուրք նացիօնալիզմի  
առն:

Մեր պատասխանառութիւնը, գործը պատճռվեան ա-  
աց ձշուած է:

ՄԵՆՔ ՃԵՐ ՊԻՐՈՒՄ ՎՐԱՅԻ ԷՆՔ:

## Ա. ԱԱՊԱՀ-ԳԻՒԽԵԱՆ

»Հեշակ«ը այսուհետեւ առանձին էջերով պէտք եղած տեղեկութիւնները պիտի տայ յայտնի ոցիսակատ գէմքերի մասին:

Սկսում ենք Փրանսիական ռահլիբրաներից:

## ԺԻՒԼ ԳԷՊ (JULES GUESDE)

Ֆրանսիական ընդհանրացնող ոգին, պարզ ու վճիտ լեզուն անկշխու դեր են խաղացել նոր մաքերի տարածման մէջ: Ամէն նոր գաղափար՝ համանարդկային գառնալուց առաջ՝ անհրաժեշտ կարիք է ունեցել գաղլիքական ինքնայտուկ հանձարի օժանակալութեան: Նոյնը պիտի առել և՛ մարքսիզմի մասին: Խակ մարքսիզմի անընկճելի տեսաբանը, առաջին ռահլիբրան, «Առաքեալը, ինչպէս սովոր են առել եղել է Ժիւլ Գէզը, խակական անունով Մաթիյո Բաղիլ:

Գաղափարական պայքարովի ամէն յատկանիշ Գէզը իր վրան արտացոլացրել է. նա՝ այդ տեսակիշտով՝ եղած է մի «զասական մարդ», նման յունական, հոտմէտական մաքիւնոցովը ըջբիշներին: Վարած է ամենաթշտառ կեանք ընկած՝ անտանելի նեղութիւնների մէջ, հազած՝ գործաւորա, կամ շապիկ, տպագրական սրբադրիչի պաշտօն ստանձնած —բայց իր մարտական վիրքից երբէք յետն չէ ընկրիկած: Նա եղել է, ինչպէս պիտի առեր կանոք, «պարտ տ կ ա ն ո ւ թ ե ա ն զ ի ն ո ւ ո ր», որ անխոռվ շարաւնակել է իր ճանապարհը: Հակառակ իր վէճ բարձրացած նիւթական և բարուական ամեն դժութեան:

Եւ սակայն նա բարձրագոյն կրթութիւն առած, բարձր լիմացականութեան և անհան եռանդի տէր էր, որի առաջ շատ զիւրութեամբ պիտի բացուեին բուրժուազական ամէն կարգի դոներ, եթէ նա սկզբունքային ամենաթեթեւ մի զիջութիւն անգամ արած լինէր:

Խրոխու ու հանդարս քայլուածքով, մարդարէական պայծառաւեսութեամբ՝ փողիսպուն դէմքով մարզը ոչ սքի ու ծափութիւնից չի վրաբում ամէն անգամ, երբ մտածունքների մէջ թալուած՝ անցնում է «Լուսոյ Քաղաքի» փողոցներով: Նոյն խակ իր կատաղի հակառակորդները ակածալից կանդում՝ իրենց ուղելցին են մատնանիշում «մարքսիզմի Փրանսիական առաքեալին»:

Ժիւլ Հիւրէն, կէս բուրժուած յայտնի մի հրապարական պայծառաւեսութեամբ՝ պայտագրում դէլիմի պարագաներ, մօնրութիւն բարձունքներում, չորրորդ յարկում՝ մի փոքրիկ սենեակ, որ մինչեւն ժամանակ աշխատանոց է. երկաթէ մի մահմակալ վրան լցուած թերթերով, վրցոյներով, թղթերով՝ մեծ կմնց, գրագարանի գարակներ, խառնիխուռն գրքերով խճողուած. մի նեղ գրասեղան՝ ծածրուած գրելաթղթերով. մէկ թիվնաթու, երկու աթու, —ահա՝ այստեղ է ապրում Գէզը, երկար՝ ու մազերով, մարդարէանման աղեքեկ միրուքով անոցը աչքերին...»:

Իր բնաւարութեան զիսաւոր գծերն են՝ ծայրագոյն հաճըքատարութիւն և վարուեցողութեան փափուկ եղանակ: Նա խորտակող, բեկանուվ ըլինճուող է, երբ խնդիրը զառնում է գաղափարի շուրջ: Այս վերջին յատկաթեան համար՝ հակառակորդները նրան առել են «իշխանաստատ» և «ամբարհաւած» մակդիւները:

Գէզը իր խակական վերի մէջն է մասնում 1871-ին, երբ 5 տարի բանտարկութեան է գաղափարուում՝ Մօնիկիէում գործած «մամուլի յանցանց» պատճառով: Դատապարտուաւուծը ապաստանում է Զուկցերիս: Այդ այն ժամանակներն էր,

երբ կարլ Մարքսի Հիմաս «Միջազգայնական»ը ներքին փոթորիկների էր ճատնուեկ: Մարքսը և Բակունինը իրարուհանդէս անտեղուալի զիրք էին բռնել:

«Միջազգայնական»ի մէջ ի՞նչ պիտի լինէր «Ընդհանուր Խորհրդի» դերը:

—Բարձրագոյն հեղինակութիւնը և ընդհանուր ուղղութիւն առուղը, կեղոնացումն, —պնդում է Մարքս:

—Ո՛չ, աղափառունացում: միջազգային ամէն հասուած և գաշնակցութիւն ինքնավար պիտի լինի, ինքն իր գործունութեան միակ տէրը և պատասխանատուն: խակ «Ընդհանուր Խորհրդորդ»ը լոկ տեղեկատու մի գրասենեակ, —առարկում էր Բակունին:

—Ո՛չ այս, ո՛չ այն, ասում է Գէզը: Ես կճանաչեմ միայն Միջազգային համագումարի բարձրագոյն հեղինակութիւնը և գերիշխանութիւնը:

Նա, ուրեմն, անկախ վիրք բռնեց:

Վինգ տարուայ ինքնաբորից յետոյ՝ Պարիզ վերաբառնալով Գէզը սկսեց աշխատակցել «Մարդուն իր առ ու ու բն բն եր» անունով թերթին, որ այդ ժամանակը ծայրագոյն յառաջապահի համագումարով իր շուրջն էր համալսերել բաւականին մեծ թուով երիտասարդութեան մարդարարութեան մարդարարութեան մեջ թուով կազմել «ընկերաց աշխատակիցն իր ու ս ու թ ի ւ ն ե ր ի շը շան ա կ ն ե ր», որոնց մասնակցում էին ո՛չ միայն արհեստակցական միութիւնների ամսամիներ, այլև բաւականին մեծ թուով պրօլետարներ, լրագրողներ, վաճառականներ, ուսանողներ և բուրժուազիայից թափուած ծառարականներ:

Գէզի անխոնջ գործունէութեան շնորհիւ՝ հաւաքականութիւնը (կոլեկտիվիզմ) բաւականին ընդարձակ նուաճումներ ունեցաւ 1871-ից սկսած: Կինում, 1877-ին, կայսցած գործառական համագումարի մէջ, որուշ կերպով երևան եկաւ մարքսիզմը: Շաճէւր, որ ընկերացին հարցը գործակցական ընկերութիւնների միջոցով վճռելու գաղափարը պաշտպանողներիցն է եղած մինչև այդ ժամանակի, յայսնեց՝ որ ինքը սկսած է և ապագան պատկանում է կոլեկտիվիզմին: Այդ միտքը յայսնեցին սրբիշ պատուիրակներ էլ: Բայց երբ ինիքիը հասաւ ժամանառ սեպհականատիրութեան, բոլորն էլ հակասոցիալիստական քուէ տուեցին, բացի երկու պատուիրակներից, Դիւտերից և Բալիվերից, որոնք հետեւել բանաձեւ առաջարկեցին.

### Նկատելով

Որ աշխատառների աղափառութիւնը կատարուած իրողութիւն կիննի միայն այն ժամանակ, երբ նրանք իրենց աշխատանքի ամբողջական արտադրույթի տէրը լիննեն:

Որ այդ նպատակին համելու համար՝ անհրաժեշտ է որ աշխատառները տէր լիննեն արտադրութեան համար օգտակար եղող բոլոր տարրերին՝ օրինակ նախանական նիւթերին և աշխատանքի գործիքներին,

### Հետևաբար,

Համագումարը հրաւիրում է բոլոր գործառական ընկերութիւններին՝ ուսումնասիրել գործնական միջոցներ, կիրարկութեան մէջ դնելու հողի և աշխատանքի գործիքներին,

Հակառակութիւնները բաւականին սուր կերպարանք առան: Օգիսատ Կօնտի միլիստիական վարդապետութեան սկզբունքը:

